Հաստատված է՝
Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանի
Գիտխորհրդի 2022 թ. մարտի 29 -ի նիստում
Արձանագրություն №01-03/22
գիտխորհրդի նախագահ, ռեկտոր՝

Ե.Վ.Վարդանյան

ԿԱՐԳ
«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ, ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) ընդունելության կարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. փետրվարի 25ի թիվ 238-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման» կարգի, համալսարանի կանոնադրության հիման վրա:

2. Սույն կարգով սահմանվում է հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով կրթության իրականացման և կազմակերպման կարգը: Հետբուհական մասնագիտական կրթությունը ներառում է ասպիրանտուրայի ընդունելությունը և ուսուցումը, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպումը, օտարերկրյա քաղաքացիների հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպումը:

3. Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության յուրաքանչյուր ուսումնական տարվա տեղերի քանակը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ համալսարանի հայտի հիման վրա: Համալսարանը հայտը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից 6 (վեց) ամիս առաջ:

4. Համալսարանի ասպիրանտ է համարվում բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող և մրցույթով անցած անձը, ով ուսանում է ասպիրանտուրայում և պատրաստում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման (այսուհետ՝ անվճար) կամ վճարովի տեղերի համար ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում է համալսարանի սահմանած ժամանակահատվածում: Ասպիրանտուրա ընդունվողներն այն ավարտելուց և գիտական թեզը պաշտպանելուց հետո, համալսարանի պահանջով պարտավոր են աշխատել համալսարանում առնվազն հինգ տարի՝ պայմանագրային հիմունքներով:

5. Համալսարանի դոկտորանտ է համարվում գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և որպես դոկտորանտ հրամանագրված անձը, ով պատրաստում է գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն:

6. Համալսարանի հայցորդ է համարվում բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող անձը, ով կցված է ասպիրանտուրային և նախապատրաստում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն:

7. Համալսարանի ասպրանտի, դոկտորանտի և հայցորդի ուսումնառությունն իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը կնքվում է սույն կարգի 1-4-րդ հավելվածներին համապատասխան:

II. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Ասպիրանտուրայում ընդունելությունը կատարվում է մրցույթով, առկա և հեռակա ձևերով: Ասպիրանտուրայի ընդունելությունը առկա ուսուցմամբ, անվճար, իրականացվում է տվյալ տարվա ժամանակահատվածի զորակոչը կազմակերպելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներում:

9. Օտար լեզվի անվճար հիմունքներով նախապատրաստական դասընթացներին և քննություններին մասնակցելու համար հավանական դիմորդների ցուցակները ներկայացվում են դասընթացներ կազմակերպող կազմակերպություններ, որոնց հետ կնքվում են պայմանագրեր:

10.Համալսարանում ասպիրանտուրայի ընդունելությունը կազմակերպում է ընդունող հանձնաժողովը՝ համալսարանի ռեկտորի նախագահությամբ:

11.Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննություններն ընդունում են մասնագիտական քննական հանձնաժողովները (այսուհետ՝ մասնագիտական հանձնաժողովներ): Մասնագիտական հանձնաժողովների կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտության բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող երեքից հինգ մասնագետ:

12.Ընդունող և մասնագիտական հանձնաժողովները կազմավորվում են համալսարանի ռեկտորի հրամանով:

13.Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների անցկացման ժամանակացույցը հաստատում է համալսարանի ռեկտորը և քննությունների սկսվելուց յոթ աշխատանքային օր առաջ քննության անցկացման տեղի և ժամանակի մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազոր մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

14.Դիմորդին մասնագիտական քննությանը մասնակցելուն թույլտրում է համալսարանի ընդունող հանձնաժողովը՝ օտար լեզվից ստացած համապատասխան միավորը հավաստող վկայականի և (կամ) տեղեկանքի առկայության դեպքում, ինչպես նաև մասնագիտությանը համապատասխան գիտական ռեֆերատի մասին մասնագիտական ամբիոնի կամ գիտական ստորաբաժանման գրավոր դրական գրախոսականի կամ գրախոսվող գիտական ամսագրերում հրատարակված գիտական աշխատանքների մասին հաստատված ցուցակի դեպքում:

15.Հայտարարությունների համար նախատեսված վայրում փակցվում և պաշտոնական կայքէջում տեղադրվում է մասնագիտական քննության՝

1) անցկացման օրվա, տեղի և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը՝ քննությունը սկսելուց յոթ աշխատանքային օր առաջ,

2) հարցաշարը՝ մասնագիտական քննությունից առնվազն մեկ ամիս առաջ,

3) ընթացակարգային պահանջները:

16.Ասպիրանտուրայի ընդունելության նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հայտարարություն է տրվում ասպիրանտուրայի ընդունելության մասին՝ նշելով գիտության բնագավառում ուսուցման ձևը, տեղերի քանակը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը, փաստաթղթերի ընդունելության և քննությունների ժամանակացույցը:

III. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

17.Ասպիրանտուրայի ընդունելությանը կարող են մասնակցել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտներ, ովքեր ունեն մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, հանձնել են «Օտար լեզու» առարկայից ստուգարք, հաղթահարելով ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավորը.

1) անգլերեն լեզվից (TOEFL iBT)՝ 46 միավոր, (IELTS)՝ 5.5 միավոր

2) ֆրանսերեն լեզվից (TCF)՝ 200 միավոր

3) գերմաներեն լեզվից (on DaF) ՝ 60 միավոր:

18.Դիմորդը կամ նրա լիազորած անձը ասպիրանտուրայի ընդունելությանը մասնակցելու համար համալսարանի ասպիրանտուրայի և գիտության տեղեկատվության բաժին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում ռեկտորի անունով,

2) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

3) օտար լեզու առարկայի ատեստավորման վկայական կամ դրան համապատասխան տեղեկանք (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),

4) ընտրած մասնագիտությամբ գրախոսվող գիտական ամսագրում հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ մասնագիտական ամբիոնի կողմից դրական գրախոսված գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

5) կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և չորս լուսանկար (3 x 4 չափսի),

6) քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմողն աշխատում է),

7) միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցության զեկուցումները (առկայության դեպքում),

8) զինվորական գրքույկի պատճենը (բացակայության դեպքում՝ զորակոչային տեղամասում կցագրման վկայականի պատճենը):

Դիմորդը կամ նրա լիազորած անձը ներկայացնում է նաև անձնագիրը և բարձրագույն կրթության դիպլոմի բնօրինակը:

IV. ՔՆՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

19.Դիմորդներն ընդունելության քննություն են հանձնում մասնագիտական առարկայից:

20.Մասնագիտական առարկայից քննության հարցաշարը, որն ընգրկում է նախորդ աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է համալսարանի մասնագիտական ամբիոնների, գիտական ստորաբաժանման կամ մասնագիտական հանձնաժողովի կողմից: Հարցաշարը (տրամադրվում է դիմորդներին) հաստատում է համալսարանի ռեկտորը կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձը, որից հետո քննությունից 2 (երկու) աշխատանքային օր առաջ՝ հրապարակված հարցաշարից, հանձնաժողովի նախագահի կողմից կազմվում են հարցատոմսեր, որոնք հաստատվում են հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և համալսարանի կնիքով:

Հարցատոմսերը յուրաքանչյուր տարի վերանայվում են:

21.Մասնագիտական քննություններն անցկացվում են գրավոր կամ բանավոր: Քննությունների անցկացման ձևը սահմանում է ընդունող հանձնաժողովը: Բանավոր քննությունը ձայնագրվում է, և արդյունքները պահպանվում են հրապարակվելուց հետո առնվազն 24 ժամ:

22.Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

23.Մասնագիտական առարկայից ասպիրանտուրա ընդունվողի գիտելիքները գնահատում է համալսարանի ընդունող հանձնաժողովը մշակված համակարգով՝ հանձնաժողովի կազմում ընդգրկված անդամների առնվազն 2/3-ի մասնակցությամբ:

24.Մասնագիտական քննության անցկացումն արձանագրվում է ասպիրանտուրա ընդունվողի քննական թերթում նշելով առաջադրված հարցերը և ստացված գնահատականը: Քննական թերթում ստորագրում են հանձնաժողովի նախագահը և ներկա գտնվող անդամները:

25.Դիմորդի գիտելիքների գնահատական համարվում է հանձնաժողովի անդամների նշանակած գնահատականների միջին թվաբանականը:

26.Դիմորդը կարող է մասնագիտական քննության գնահատականը բողոքարկել քննությունների արդյունքները հրապարակելուց հետո մեկ ժամվա ընթացքում: Բողոքը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին գրավոր ձևով: Բողոքը քննարկվում է նույն օրը:

27.Բողոքարկմանը մասնակցում են համալսարանի վարչական անձնակազմի (դեկան կամ ուսումնամեթոդական ստորաբաժանման ներկայացուցիչ)՝ տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատողը և համալսարանի ուսանողական կամ երիտասարդ գիտնականների խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են համալսարանի ռեկտորի կողմից:

28.Հանձնաժողովը դիմորդի ներկայությամբ ուսումնասիրում և քննարկում է գրավոր աշխատանքը և լսում բանավոր պատասխանի ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում հանձնաժողովը բաց քվեարկությամբ, անդամների և ներգրավված անձանց ձայների պարզ մեծամասնությամբ, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) գնահատականը թողնել անփոփոխ,

բ) գնահատականը բարձրացնել:

29.Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, համալսարանի վարչական անձնակազմի ուսանողական կամ երիտասարդ գիտնականների խորհրդի ներկայացուցիչները և դիմորդը: Նշված անձանցից որևէ մեկի կողմից ընդունված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

30.Մասնագիտական քննության գնահատականը կարող է բողոքարկվել դատարանում՝ օրենքով սահմանված կարգով:

31.Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում:

32.Ասպիրանտուրայի մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է տվյալ ուսումնական տարվա ընդունելության ընթացքում:

V. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

33.Մրցույթն իրականացվում է ըստ մասնագիտական քննությունից ստացած գնահատականի: Մասնագիտական քննությունը գնահատվում է 20 (քսան) միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդը ստացել է առնվազն 13 (տասներեք) միավոր:

34.Ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը: Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշներն ըստ հերթականության՝

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ընդհանուր միջին որակական գնահատականը,

2) բակալավրի և մագիստրոսի ընդհանուր միջին որակական գնահատականների գումարը,

3) հրատարակված գիտական աշխատանքների թիվը,

4) միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

35.Ընդունող հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա որոշում է ընդունում յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ:

36.Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ որոշման մասին դիմորդներն իրազեկվում են մասնագիտական քննությունից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

37.Ասպիրանտների հրամանագրումը կատարվում է համալսարանի ռեկտորի հրամանով՝ ասպիրանտի հետ կնքելով համապատասխան պայմանագիր:

38.Առկա ուսուցման ձևով և անվճար հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին տրվում է սահմանված չափի պետական կրթաթոշակ՝ ընդունման օրվանից:

VI. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

39.Ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Առկա ձևով ուսուցման տևողությունը սահմանվում է 3 տարի, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 4 տարի:

40.Ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները հաստատելուց հետո մեկամսյա ժամկետում համապատասխան ամբիոնում քննարկվում է ասպիրանտի թեմայի (թեկնածուական ատենախոսության վերնագրի) հիմնավորման և թեմայի գիտական ղեկավար նշանակելու վերաբերյալ հարցերը: Ամբիոնի որոշումը (եզրակացությունը) ՝ նիստի արձանագրությունը ներկայացվում է համապատասխան ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը:

41.Ամբիոնի որոշումը և նիստի արձանագրությունը ֆակուլտետի գիտական խորհրդում քննարկվում է այն ստանալուց հետո առավելագույնը մեկամսյա ժամկետում: Կայացված որոշումը, նիստի արձանագրությունը և թեմայի հիմնավորումը ներկայացվում է համալսարանի գիտական խորհրդին:

42.Համալսարանի գիտական խորհուրդը ասպիրանտի հրամանագրման օրվանից ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում՝ հաստատում է ատենախոսության թեման, գիտական ղեկավարին և ասպիրանտի աշխատանքային պլանը:

43.Համալսարանի գիտական խորհրդում ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավար նշանակելու վերաբերյալ որոշում ընդունելուց հետո Համալսարանի ռեկտորի և գիտական ղեկավարի միջև կնքվում է համաձայնագիր՝ սույն կարգի 5–րդ հավելվածի օրինակելի ձևին համապատասխան:

44.Ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է ուսումնական պլաններին, առարկայական ծրագրերին և ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան:

45.Ասպիրանտուրայում ուսուցման լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական:

46. Ասպիրանտուրայում առկա ուսուցման ձևով ուսանելու ժամանակը համարվում է գիտամանկավարժական ստաժ:

47.Առկա ուսուցմամբ ասպիրանտին ուսման ընթացքում տարեկան տրվում է երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ:

48.Ուսումնառության ընթացքում ասպիրանտն իրավունք ունի՝

1) օգտվել համալսարանի գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործուղումների իրավունքից, ինչպես նաև հնարավորության պարագայում՝ հանրակացարանից,

2) մասնակցել գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին և այլ գիտական միջոցառումներին,,

3) գիտական ղեկավարի կողմից սույն կարգի 58-րդ կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում դիմել համապատասխան ամբիոնի վարիչին՝ նոր գիտական ղեկավար նշանակելու վերաբերյալ առաջարկությամբ, դիմումին կցելով հիմնավորված փաստարկներ,

4) իրացնել ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով սահմանված այլ իրավունքները:

49.Ուսումնառության ընթացքում ասպիրանտը պարտավոր է.

1) Համալսարանի կողմից սահմանված կարգին համապատասխան հանձնել ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննությունները) և ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում՝ մասնագիտական քննությունը),

2) ասպիրանտուրա ընդունվելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատման ներկայացնել ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի վերաբերյալ առաջարկություններ,

3) կազմել և Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել առնվազն 36 ժամվա մանկավարժական ծանրաբեռնվածության աշխատանքային պլանը,

4) սահմանված ժամկետում կատարել ուսումնական և առարկայական ծրագրերով սահմանված առաջադրանքները, ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված պահանջները,

5) մինչև ատենախոսության պաշտպանությունը հրատարակել առնվազն վեց գիտական հոդված, որոնցից առանց համահեղինակների՝ երկուսը, կամ առնվազն երեք գիտական հոդված, որոնցից առնվազն մեկ հոդված Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում և մեկ հոդված առանց համահեղինակների,

6) ժամանակացույցին համապատասխան ներկայացնել աշխատանքային պլանը,

7) յուրաքանչյուր կիսամյակի ավարտին գիտական ղեկավարին և համապատասխան ամբիոնի վարիչին ներկայացնել հաղորդում հետազոտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ,

8) յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ներկայացնել հաշվետվություն և անցնել ատեստավորում համապատասխան ամբիոնում,

9) կուտակել համապատասխան կրեդիտներ,

10) սահմանված ժամկետում ավարտել ատենախոսությունը և համապատասխան ամբիոնում անցկացնել ատենախոսության նախնական քննարկում,

11)սահմանված կարգով և ժամանակացույցին համապատասխան ատենախոսությունը ներկայացնել պաշտպանության,

12) խնամքով և հոգատարությամբ վերաբերվել Համալսարանի գույքին,

13) կատարել ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված այլ պարտականությունները,

50.Ասպիրանտի կողմից սույն կարգի 49-րդ կետով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գիտական ղեկավարը պարտավոր է զեկուցագիր ներկայացնել համապատասխան ամբիոնի վարիչին՝ ասպիրանտի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու համար՝ ընդհուպ մինչև ասպիրանտի հետ կնքված պայմանագրի լուծումը:

51. Պետական պատվերի շրջանակներում ընդունված ասպիրանտը պարտավոր է ուսումն ավարտելուց, թեկնածուական ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանելուց և ԲՈԿ-ի կողմից հաստատումը ստանալուց հետո անհրաժեշտության դեպքում առնվազն 5 տարի աշխատել համալսարանում:

52. Սույն կարգի 39-րդ կետով սահմանված ուսուցման տևողության ժամկետը լրանալու կամ 49-րդ կետի 8-րդ նախատեսված ատեստավորում չանցնելու դեպքերում ասպիրանտը Համալսարանի ռեկտորի հրամանով ազատվում է ասպիրանտուրայից:

53.Անվճար հիմունքով ասպիրանտուրա ընդունված և ասպիրանտուրայից հեռացված ասպիրանտը կարող է վերականգնվել ասպիրանտուրայում՝ վճարովի հիմունքով ուսումը շարունակելու համար:

54. Ատենախոսությունը չպաշտպանած ասպիրանտին, իր ցանկությամբ, անվճար տրվում է ակադեմիական տեղեկանք՝ ասպիրանտի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը Համալսարանի ռեկտորին ներկայացվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

55. Ասպիրանտի գիտական ղեկավար կարող են նշանակվել տվյալ բնագավառի գիտության դոկտորները և այն թեկնածուները, ովքեր ստացել են ԲՈԿ-ի թույլտվությունը:

56. Երկակի նշանակության, ինչպես նաև գործընկեր գիտական կամ ուսումնական հաստատությունների հետ համատեղ իրականացվող հետազոտությունների պարագայում գիտական ղեկավար (ղեկավարներ) կարող է նշանակվել համապատասխան ամբիոնների (իրավասու կառուցվածքային ստորաբաժանումների) համատեղ որոշումով:

57. Ատենախոսության գիտական ղեկավարն ապահովում է գիտական աշխատանքի համապատասխանությունը թեկնածուական ատենախոսությանը ներկայացված պահանջներին:

58. Ատենախոսության գիտական ղեկավարը.

1) ասպիրանտի հետ համատեղ նախապատրաստում և կազմում է գիտական հետազոտության անհատական պլան, ընթացքում ճշտումներ և փոփոխություններ կատարելով՝ ըստ ուրվագծվող թեմատիկ շարադրանքի,

2) ընդհանուր ուղղություն է տալիս ասպիրանտի գիտահետազոտական աշխատանքին՝ օգնելով նրան ճիշտ գնահատելու որոշումների հնարավոր տարբերակները, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը և փաստացի ճշտությունը,

3) աջակցում է ասպիրանտին՝ գիտական աշխատանքի նպատակն ու խնդիրները, հիմնավորվումը, թեմայի արդիականությունը, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը ձևակերպելու խնդիրներում,

4) թեմայի շրջանակներում ասպիրանտին ուղղորդում է անհրաժեշտ մասնագիտական գրականության, տեղեկագրերի, վիճակագրական, արխիվային նյութերի և այլ աղբյուրների ընտրության հարցում, ցուցաբերում է գիտական և մեթոդական օգնություն,

5) անցկացնում է համակարգված խորհրդատվություններ և վերահսկում կատարված աշխատանքը, խորհուրդներ է տալիս որոշումների ընդունման նպատակահարմարության վերաբերյալ,

6) գնահատում է կատարված գիտական աշխատանքի բովանդակությունն՝ ըստ համապատասխան բաժինների և ամբողջությամբ,

7) հետևում է ատենախոսության ձևավորմանը՝ տեխնիկական պահանջներին համապատասխան, ուշադրություն դարձնելով գիտական տեքստ շարադրելու և ներկայացնելու հմտություններին,

8) օգնում է ասպիրանտին գիտական հոդվածներ պատրաստելու, հետազոտության հիմնական արդյունքների և դրույթների գիտական հրատարակման գործում,

9) օգնում է ասպիրանտին՝ ճիշտ ձևակերպելու եզրակացությունները և առաջարկությունները

10) յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին կատարված աշխատանքների մասին հաշվետվություն է ներկայացնում համապատասխան ամբիոնին:

59. Յուրաքանչյուր գիտական ղեկավար կարող է միաժամանակ ունենալ 5-ից ոչ ավելի ասպիրանտ և հայցորդ:

60. Գիտական ղեկավարների աշխատանքի վարձատրությունը կատարվում է մեկ ասպիրանտի համար տարեկան 60 ժամ հաշվարկով:

61. Համալսարանը կարող է արտաբյուջետային միջոցների հաշվին սահմանել հավելավճար ղեկավարների համար, այդ թվում՝ ատենախոսությունը սահմանված ժամկետում պաշտպանելու դեպքում:

VII. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

62.Օտարերկրացիները հետբուհական մասնագիտական կրթություն կարող են ստանալ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված հետբուհական հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով՝ ուսուցման առկա և հեռակա ձևերով՝ մասնագիտությունների հաստատված ցանկին համապատասխան:

63. Հետազոտողի կրթական ծրագրով ասպիրանտուրայում ուսանելու համար համալսարան կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր ունեն Հայաստանի Հանրապետության առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի կրթական աստիճանին համապատասխան կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ):

64.Ընդունելությունն իրականացվում է դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև դիմորդի կողմից ներկայացված գիտական ռեֆերատի վերաբերյալ համալսարանի դրական կարծիքի հիման վրա:

65.Օտարերկրացիները համալսարանում կարող են սովորել՝

1) պայմանագրային հիմունքներով (վճարովի),

2) միջպետական և միջգերատեսչական պայմանագրերով կամ համաձայնագրերով՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) օտրերկրացիներին տրամադրվող տեղերի շրջանակներում,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սփյուռքահայերի ընդունելության համար տրամադրված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի սահմաններում:

66.Դիմորդների համար վճարովի տեղերի թիվը չի սահմանափակվում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ:

67.Ընդունելության ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով:

68.Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի անունով,

2) նախարարության կողմից տրամադրված դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն ձևի,

3) բժշկական տեղեկանք ընդհանուր առողջական վիճակի մասին. կարող է տրված լինել նաև Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների կողմից,

4) անձնագրի կամ ծննդյան վկայականի բոլոր էջերի պատճենները և (կամ) մկրտության վկայականը,

5) կրթական աստիճանի ավարտական փաստաթղթի պատճենը,

6) 3 x 4 չափսի 4 լուսանկար,

7) ինքնակենսագրություն (CV)՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն,

8) ընտրած մասնագիտության թեմայով գիտական ռեֆերատ՝ 20 էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն:

69.Դիմորդների փաստաթղթերի հաշվառումը և փորձաքննությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից:

70.Փաստաթղթերը նախարարություն ներկայացվում են՝

1) դիմորդի կամ նրա լիազորված անձի կողմից,

2) համալսարանի կողմից,

3) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով,

4) փոստով (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով)՝ նախարարության պաշտոնական հասցեով:

71.Օտարերկրացիների ուսուցումն ասպիրանտուրայում իրականացվում է համաձայն սույն կարգի VI բաժնում սահմանված ձևով:

VIII. ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ

72. Համալսարանում դոկտորանտուրայի տևողությունը սահմանվում է մինչև 3 տարի:

73. Դոկտորանտուրայում կարող են ձևակերպվել այն անձինք, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և ներկայացնում են գիտական հիմնարար և (կամ) կիրառական հետազոտությունների ծրագիր (նախագիծ)՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

1) ԺԸ.00.01-Ճարտարապետություն,

2) Ե.23.01-Շինարարական կոնստրուկցիաներ, շենքեր, կառույցներ, շինարարական նյութեր և շինարարական մեխանիկա,

3) Ե.23.03-Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավլիկ և այլն) ապահովում,

4) Ե.23.06-Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր:

74. Դոկտորանտուրայում ձևակերպվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է Համալսարանի ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագրի պատճենը (այլ երկրներում գիտական աստիճանի վկայագիր ստացածների համար՝ նաև բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից տրված համապատասխանեցման հավաստագիրը).

2) դոկտորական ատենախոսության պլանը.

3) ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3 x 4 չափսի).

4)հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի և հայտնագործությունների, ինչպես նաև կատարված գիտահետազոտական աշխատանքների ցանկը:

75.Դիմումը ներկայացնելուց հետո երկշաբաթյա ժամկետում դոկտորական ատենախոսության պլանը և դոկտորանտի ցանկությամբ՝ գիտական խորհրդատուի թեկնածությունը քննարկվում են Համալսարանի գիտատեխնիկական խորհրդում:

76.Գիտատեխնիկական խորհրդի դրական եզրակացության դեպքում Համալսարանի ռեկտորի հրամանով դոկտորանտը ձևակերպվում է դոկտորանտուրայում՝ նշանակելով գիտական խորհրդատու: Դոկտորանտի հետ կնքվում է պայմանագիր, գիտական խորհրդատուի հետ՝ համաձայնագիր:

77. Հետազոտություններ իրականացնելիս դոկտորանտն իրավունք ունի՝

1) օգտվել հաստատության գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործուղումների իրավունքից, ինչպես նաև հնարավորության պարագայում՝ հանրակացարանից,

2) մասնակցել գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին և այլ գիտական միջոցառումներին,

3) գիտական խորհրդատուի կողմից սույն կարգի 81-րդ կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում դիմել Համալսարանի գիտատեխնիկական խորհրդին՝ նոր գիտական խորհրդատու նշանակելու վերաբերյալ առաջարկությամբ, դիմումին կցելով հիմնավորված փաստարկներ.

4)իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով սահմանված այլ իրավունքները:

78.Հետազոտություններ իրականացնելիս, դոկտորանտը պարտավոր է.

1) ժամանակացույցին համապատասխան ներկայացնել աշխատանքային պլանը,

2) յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ներկայացնել հաշվետվություն և անցնել ատեստավորում համալսարանի գիտատեխնիկական խորհրդում,

3)մինչև ատենախոսության պաշտպանությունը ունենալ առնվազն քսան հրատարակված գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն հինգը՝ Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում, ընդ որում, առանց համահեղինակների հրապարակումների թիվը պետք է լինի առնվազն հինգը,

4)ապահովել ատենախոսության նախնական քննարկումը համապատասխան ամբիոնում,

5)սահմանված կարգով և ժամանակացույցին համապատասխան ատենախոսությունը ներկայացնել պաշտպանության,

6) խնամքով և հոգատարությամբ վերաբերվել Համալսարանի գույքին,

7)կատարել ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված այլ պարտականությունները:

79.Դոկտորանտի կողմից սույն կարգի 78-րդ կետով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գիտական խորհրդատուն պարտավոր է զեկուցագիր ներկայացնել Համալսարանի գիտատեխնիկական խորհրդին՝ դոկտորանտի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու համար՝ ընդհուպ մինչև դոկտորանտի հետ կնքված պայմանագրի լուծումը:

80.Դոկտորանտների գիտական խորհրդատուների աշխատանքի վարձատրությունը կատարվում է Համալսարանի կողմից սահմանված կարգով և չափով:

81.Գիտական խորհրդատուն՝

1) դոկտորանտի հետ համատեղ նախապատրաստում և կազմում է գիտական հետազոտության անհատական պլան, ընթացքում ճշտումներ և փոփոխություններ կատարելով՝ ըստ ուրվագծվող հետազոտությունների,

2) անցկացնում է համակարգված խորհրդատվություններ և վերահսկում կատարված աշխատանքը, խորհուրդներ է տալիս այս կամ այն որոշման ընդունման նպատակահարմարության վերաբերյալ,

3) գնահատում է կատարված գիտական աշխատանքի բովանդակությունն՝ ըստ համապատասխան բաժինների և ամբողջությամբ,

4) յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին Համալսարանի գիտատեխնիկական խորհրդին ներկայացնում է հաշվետվություն՝ դոկտորանտի հետազոտությունների ընթացքի և իր կատարած աշխատանքների վերաբերյալ:

IX. ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ

82.Հայցորդ կարող են ձևակերպվել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձիք:

83.Համալսարանում հայցորդությունն իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով:

84. Հայցորդության տևողությունը սահմանվում է մինչև 5 տարի:

85. Հայցորդ ձևակերպվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է Համալսարանի ռեկտորին՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

2)հրատարակված գիտական աշխատությունների ցուցակը կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ.

3) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի).

4) քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմողն աշխատում է):

86.Հայցորդի դիմումը և ներկայացված փաստաթղթերը քննարկվում են Համալսարանի գիտատեխնիկական խորհրդում և դրական եզրակացության դեպքում ձևակերպվում Համալսարանի ռեկտորի հրամանով, ինչից հետո հայցորդի և Համալսարանի ռեկտորի միջև կնքվում է պայմանագիր՝ սույն կանոնակարգի 5–րդ հավելվածի օրինակելի ձևին համապատասխան:

87.Հայցորդի թեմայի (թեկնածուական ատենախոսության վերնագրի) հիմնավորման քննարկումը և թեմայի գիտական ղեկավար նշանակելու, ուսումնառության վերաբերյալ հարցերը, հայցորդի և նրա գիտական ղեկավարի իրավունքների ու պարտականությունների շրջանակը կարգավորվում են սույն կարգի 40-45-րդ, 48-րդ, 49-րդ (բացառությամբ 3-րդ ենթակետի), 54-55-րդ, 57-58-րդ կետերով սահմանված դրույթներին համապատասխան:

88.Հայցորդի գիտական ղեկավարի աշխատանքային բեռնվածքը պետք է կազմի տարեկան առնվազն 30 ժամ:

X. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

89. Սույն կարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

90. Սույն կարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի որոշումը համալսարանի ռեկտորի ստորագրությամբ հաստատվելուց հետո՝ հաջորդ օրը:

91. Այն հարցերը, որոնք չեն ներառվել սույն կարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կրթական օրենսդրությամբ և պետական լիազոր մարմնի ակտերով:

92. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցված է համարվում համալսարանի գիտական խորհրդի 25.05.2016թ. թիվ 01-05/16 որոշմամբ հաստատված «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը:

Գիտական քարտուղար՝ Լ.Հ. Լևոնյան

29-ը մարտի, 2022 թ.
գիտխորհրդի որոշում № 01/03/22